[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
20	Դեկտեմբեր	2022 թ.		Ա	9707788191
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
20	Դեկտեմբեր	2022 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	20 Դեկտեմբեր, 2022 թ.	22-0220Պ

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 8 3 6 5 2 5
[9] Անվանումը	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 8 3 6 5 2 5 / 1
[11] Բանկային տվյալները	Երևանի թիվ 1 ՏԳԲ — N 900018005588
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԹԱՂԱՄԱՍ ԻՍԱԿՈՎԻ 24
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 1 5 3 3 3 3 4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	ՀՀ ԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	Երևանի թիվ 1 ՏԳԲ — N 900011021947
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ Նալբանդյան 130
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր — Համար: Լիազորագիր — Ամսաթիվ:

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծավալակշռային բաշխում)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	06. Հետքաբանական փորձաքննություն 06-02	հատ	1	37500		37500	20	7500	45000
2	14. Ավտոտեխնիկական փորձաքննություն 14-02	հատ	1	60000		60000	20	12000	72000
Ընդամենը						97500	X	19500	117000

Դուրս գրող՝ BAGHDASARYAN NAREK
2203930810
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

20/12/2022 16:22:21

Հավելված թիվ 3
Ծառայությունների կատարման մասին «20» «12» 2022թ.
կնքված N22-0220Պ պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանության տնտեսական վարչություն
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130
հեռ.՝ 010596486
ՀՀ 900011021947
ՀՎՀՀ 01533334

ԿԱՏԱՐՈՂ

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Իսակովի 24, հեռ.՝ (374-10) 77-77-10
ՀՀ ՖՆ գանձապետարան, Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՀ՝ 900018005588
ՀՎՀՀ՝ 01836525

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

20.12.2022թ.

Պայմանագրի անվանումը՝ Ծառայությունների կատարում
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 20.12.2022թ.
Պայմանագրի համարը՝ 22-0220Պ

Պատվիրատուն՝ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունը, ի դեմս՝ վարչության պետ Ա.Ներսիսյանի և Կատարողը՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, ի դեմս՝ տնօրեն Ա.Հովսեփյանի, սույն արձանագրությամբ հավաստում են, որ վերը նշված պայմանագրով նախատեսված ծառայությունը կատարված և դրա համար վճարումը կատարված է պայմանագրի պայմաններին համապատասխան:

Կատարողը 20.12.2022թ.-ից մինչև 20.12.2022թ.-ը կատարել է նշված պայմաններով ծառայությունը՝

Կատարված աշխատանքների (մատուցված ծառայության) համառոտ նկարագիրը *(անվանումն ըստ փորձաքննության /հետազոտության/ յուրաքանչյուր տեսակի /կոդի/ և ենթատեսակի /կոդի/)*	**Կատարված (մատուցված ծառայության ծավալում ներառված) աշխատանքների յուրաքանչյուր տեսակի ենթատեսակի քանակական ցուցանիշը** *(միավորների քանակը)*	**Կատարված (մատուցված ծառայության ծավալում ներառված) աշխատանքների ըստ դասակարգման 1 միավորի գինը** *(ՀՀ դրամ, ներառյալ օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ)*	**Աշխատանքների կատարման (ծառայության մատուցման) ժամկետը**	**Վճարման ենթակա գումարը** *(ՀՀ դրամ, ներառյալ օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ)*	**Պայմանագրի համարը**
06-հետքաբանական փորձաքննություն (06-02)	1	45000	20.12.2022թ. 20.12.2022թ.	45000	22-0220Պ
14-ավտոտեխնիկական փորձաքննություն (14-02)	1	72000		72000	
Ընդամենը				117000	

Սույն արձանագրությունը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Ծառայության կատարման վերաբերյալ հարկային հաշիվները հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը (կցվում են):

Աշխատանքը (ծառայությունը) հանձնեց

Տնօրեն՝ _____ Ա.Հովսեփյանը

Աշխատանքն (ծառայությունն) ընդունեց

Պատվիրատու՝ _____ Ա.Ներսիսյանը

Կատ.՝
տնօրենի տեղակալ փորձաքննությունների գծով Ա.Գահնապետյան
Հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ Լ.Մեքինյան
ՃՏՊ հանգամանքների, տրանսպորտային միջոցների
տեխնիկական վիճակի և տրանսպորտահետքաբանական
փորձաքննությունների բաժնի պետ Դ.Դալլաքյան
հեռ. 77-77-10 (+ 116, 119)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ»
ՊՈԱԿ

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
Հեռ. (37410) 77-77-10

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

"НАЦИОНАЛЬНОЕ БЮРО ЭКСПЕРТИЗ"
ГНКО

0004, г. Ереван, пр. Адмирала Исакова 24
Тел. (37410) 77-77-10

Թիվ 22-0220Պ

2022թ. դեկտեմբերի «20»

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

/ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ.՝ 010596486/

Ձեր կնքած №22-0220Պ առ 20.12.2022թ.
պայմանագրի համաձայն

Ուղարկվում է ավտոտեխնիկական և հետքաբանական համալիր փորձաքննության 2022թ.-ի դեկտեմբերի «20»-ի թիվ 22-0220Պ «Փորձագետի եզրակացություն»-ը՝ համաձայն ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության ավտոտնտեսության պետ Վ.Ավագյանի կողմից 2022թ.-ի դեկտեմբերի «20»-ին տրամադրված անվադողի նմուշի, պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի չափորոշիչներին համապատասխանությունը և դրա վրա նշված արտադրման տարեթվի և շաբաթվա դրոշմաչափման հատվածում հղկման և վերադաջման հետքերի առկայությունը պարզելու նպատակով, ավտոտեխնիկական և հետքաբանական համալիր փորձաքննություն կատարելու մասին №11/15 գրության:

Առդիր՝
1. «Փորձագետի եզրակացություն»-ը՝«4» էջից,
   լուսանկարչական համակարգչային հավելվածը՝ «1» թերթից,
   հանձնման-ընդունման արձանագրությունը՝ «1» թերթից,
   հարկային հաշիվը, պայմանագիրը:
2. Վերադարձվող նյութերը՝ փորձաքննությանը տրամադրված անվադողը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ Ա.ՀՈՎՍԵՓՅԱՆ

Կատ.՝
տնօրենի տեղակալ փորձաքննությունների գծով Ա.Գահնապետյան
Հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ Լ.Մեքինյան
ՃՏՊ հանգամանքների, տրանսպորտային միջոցների
տեխնիկական վիճակի և տրանսպորտահետքաբանական
փորձաքննությունների բաժնի պետ Դ.Դալլաքյան
հեռ. 77-77-10 (+116, 119)

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ»

ՊՈԱԿ

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24

Հեռ. 77-77-10 (օպերատոր)
77-77-10 (+116)

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թիվ 22-0220Պ

Ըստ՝ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության ավտոտնտեսության պետ Վ.Ավագյանի գրության:

Փորձաքննության տեսակը՝ ավտոտեխնիկական և հետքաբանական համալիր:

Փորձաքննության հիմքը՝ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետ Ա.Ներսիսյան հետ 2022թ. դեկտեմբերի «20»-ին կնքված № 22-0220Պ պայմանագիրը ավտոտեխնիկական և հետքաբանական համալիր փորձաքննություն /հետազոտություն/ կատարելու մասին:

Փորձաքննությունը սկսվել է 2022թ.-ի դեկտեմբերի «20»-ին:

Փորձաքննությունն ավարտվել է 2022թ.-ի դեկտեմբերի «20»-ին:

Փորձագետի եզրակացությունը շարադրված է «4» էջի վրա:

Լուսանկարչական համակարգչային հավելվածը բերված է «1» էջի վրա /1 թերթ/:

Տեղեկություններ փորձաքննությունը կատարող փորձագետի մասին

Արմեն Նվերի Ղանդիլյան - Հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ, բարձրագույն կրթությամբ, դատահետքաբանական, տրանսպորտային հետքաբանական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ, փորձագիտական աշխատանքային ստաժը՝ 11 տարի:

Ռուբեն Սարգսի Աղայան - ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի ՃՏՊ հանգամանքների, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի

հետազոտությամբ պարզվեց, որ նշված հատվածում դաջման եղանակող առկա է 3922 գրառումը (նկ.№4), որի ձախից հաշված երկու թվերը՝ այսինքն 39 թվերն ըստ տեղեկատու գրականություններում և ինտերնետ կայքերում առկա տվյալների՝ վկայում են անվադողի արտադրման շաբաթվա մասին, իսկ հաջորդող երկու թվերը, այսինքն 22 թվերը՝ վկայում են անվադողի արտադրման տարեթվի մասին: Անվադողի արտադրման շաբաթվա և տարեթվի մասին վկայող 3922 դաջվածքի և դրան հարող մակերեսների դիտարկման մեթոդով ուսումնասիրելով, ինչպես անզեն աչքով, այնպես էլ խոշորացույցի տեսադաշատում, պարզվեց, որ 3922 թվերից ձախից հաշվված 3-րդ և 3-րդ թվերի դաջվածքները՝ այսինք 9 թվանաշանի և դրան հաջորդող 2 թվանաշանի դաջվածքները որոշակի տեղախախտված են դեպի անվադողի նստեցման եզրի ուղղությամբ (նկ.№4): Անվադողի արտադրման շաբաթվա և տարեթվի մասին վկայող 3922 դաջվածքի հարթակն անվադողի կողային մակերեսի նկատմամբ որոշակի արտացցված դիրքով է տեղակայված: Հետազոտությամբ անվադողի արտադրման շաբաթվա և տարեթվի մասին վկայող 3922 թվերի դաջվածքի, դրանց դաջման հարթակի և դրանց հարող՝ անվադողի կողային մակերեսներին հղկման, կամ վերադաջմանը բնորոշ հետքեր չհայտնաբերվեցին:

Ելներով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ փորձաքննությանը տրամադրված անվադողը «Cordiant» ֆիրմայի արտադրության է և ունի 225/60R18 չափական տվյալներ, որն ըստ իր վրա առկա գրառման 2022 թվականի 39-րդ շաբաթվա արտադրության է:

Փորձագետ՝ **Ա.Ղանդիլյան**

Ավտոտեխնիկական մաս

Անվադողի արտաքին հետազոտություն

/կատարող փորձագետ՝ Ռ.Աղայան/

Փորձաքննությանը տրամադրված 225/60R18 չափով անվադողի արտաքին տեսքը պատկերված է սույն եզրակացությանը կից լուսանկարչական համակարգչային հավելվածի հմ.1 և հմ.2 լուսանկարներում (անվադողի անվահեցի վրա նստեցման եզրի արտաքին կողային մասում՝ դեղին գույնի ուղանկյունաձև մակերևույթի վրա առկա է «4010 08501» գրառումը /լուսանկար հմ.6/): Անվադողի արտաքին հետազոտությամբ պարզվեց, որ դրա կողային արտաքին մակերևույթներին առկա են՝ «MADE IN RUSSIA», «Cordiant», «Snow Cross 2SUV», «225/60R18», «104T», «TUBELESS», «3922» /լուսանկարներ հմ.1÷հմ.6/, «M+S» և այլ գրառումներ ու դաջվածքներ: Ըստ նշված գրառումների՝ անվադողը համապատասխանաբար ՌԴ արտադրության է, արտադրողը՝ «Cordiant»-ն է, մակնիշը՝ «Snow Cross 2SUV», «225/60R18» չափի է, անխուց, սահմանային արագության ինդեքսը T(190կմ/ժամ), բեռնվածության ինդեքսը՝ «104», այսինքն բեռնվածությունը /Max Load/՝ 900կգ է, «M+S» անվադողի պահպանաշերտի նախշանկարը ձմեռային տեսակի է, արտադրության տարեթիվը «3922», այսինքն՝ 2022թ.-ի 39-րդ շաբաթ: Հետազոտության արդյուքում եզրակացնում եմ, որ ներկայացված անվադողի կողային արտաքին մակերևույթներին նշված տվյալները համապատասխանում են ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ԱՆԻՎ/R18/17 պայմանագրով սահմանված անվադողի, փորձաքննությանը տրամադրված տեխնիկական բնութագրում նշված համապատասխան չափորոշիչներին:

Փորձագետ՝ ***Ռ.Աղայան***

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ

2022թ. եզրակացություն № 22-0220 Պ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ



Նկ.№1



Նկ.№2



Նկ.№3



Նկ.№4



Նկ.№5



Նկ.№6

Փորձագետներ՝ **Ա.Ղանդիլյան**

Ռ.Աղայան

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 22-0220Պ

ք. Երևան «20» դեկտեմբերի 2022թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետ Ա.Ներսիսյանի, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Ա. Հովսեփյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքի հիման վրա կատարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայության բնութագրին համապատասխանող փորձաքննությունը և տրամադրել փորձագետի եզրակացությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել վերջինիս արդյունքը և վճարել դրա համարը:

1.2. Փորձաքննությունը (հետազոտությունը, փորձարկումը, գնահատումը) իրականացվում է հետևյալ տեխնիկական առաջադրանքը կատարելու (առաջադրված հարցերը պարզաբանելու) համար.

Հարց 1. Խնդրում եմ տալ փորձագիտական եզրակացություն, պարզելով ներկայացված անվադողը համապատասխանում է պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի չափորոշիչներին, և արդյոք անվադողի վրա նշված արտադրման տարեթվի և շաբաթվա դրոշմաչափման հատվածում առկա են արդյոք հղկման և վերադաջման հետքեր, թե՝ ոչ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Կատարողից պահանջել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ապահովել փորձաքննության կատարումը, եզրակացության կազմումը և իրեն տրամադրումը,

2.1.2. հարցում անել Կատարողին Ծառայության մատուցման ընթացքի վերաբերյալ՝ առանց խոչընդոտելու վերջինիս աշխատանքին,

2.1.3. Ծառայության մատուցման ընթացքում ի հայտ եկած նոր հանգամանքների հետևանքով, Կատարողի հետ համաձայնեցված ժամկետով, պահանջել երկարաձգելու սույն պայմանագրի գործողության ժամկետը,

2.1.4. հրաժարվել սույն պայմանագրի կատարումից և պահանջել վաղաժամկետ լուծել այն՝ միաժամանակ Կատարողին վճարելով պայմանագրի 5.1 կետով սահմանված գնի 50 (հիսուն) տոկոսը, եթե փորձագետը արդեն ձեռնամուխ է եղել Ծառայության մատուցմանը և կատարել է հետազոտելի օբյեկտի հետազոտություն, իսկ հետազոտությունը կատարված չլինելու դեպքում՝ վճարել Կատարողի կողմից փաստացի կատարված ծախսերը,

2.1.5. Կատարողից պահանջել պատշաճ կերպով կատարելու սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. տրամադրել փորձաքննության համար անհրաժեշտ հետազոտելի օբյեկտը՝ ըստ անհրաժեշտության ձեռնարկելով Կատարողի անվտանգությունն ապահովող համապատասխան միջոցներ,

2.2.2. չմիջամտել Ծառայության մատուցմանը,

2.2.3. Կատարողի գրավոր միջնորդության հիման վրա, հնարավոր սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան միջնորդությունը ստանալու օրվանից սկսած 10 (տասը) օրվա ընթացքում, վերջինիս տրամադրել փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) կատարման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ ելակետային տվյալներ պարունակող օբյեկտներ,

2.2.4. ըստ անհրաժեշտության, Կատարողի պահանջով կամ իր նախաձեռնությամբ, մասնակցել Ծառայության մատուցմանը,

2.2.5. ընդունել կազմված եզրակացությունը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով,

2.2.6. սույն պայմանագրի 5.1 և 5.2 կետերին համապատասխան Կատարողին վճարել սույն պայմանագրի գինը,

2.2.7. պատշաճ կերպով կատարելու սույն պայմանագրով ստանձնած իր պարտականությունները:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել կատարելու իր կողմից ներկայացված միջնորդության մեջ նշված պահանջը,

2.3.2. սույն պայմանագրի կատարման ընթացքում ի հայտ եկած նոր հանգամանքների հետևանքով, Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամկետով, պահանջել երկարաձգելու սույն պայմանագրի գործողության ժամկետը,

2.3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.2.1 և (կամ) 2.2.3 կետերով նախատեսված պարտականությունների չկատարման (մասնակի կատարման) դեպքում գրավոր տեղեկացմամբ կասեցնել իր պարտավորության (դրա համապատասխան մասի) կատարումը կամ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ վաղաժամկետ լուծելով այն և պահանջելով վճարել Պայմանագրի գնի 50 տոկոսը, եթե փորձագետը արդեն ձեռնամուխ է եղել Ծառայության մատուցմանը և կատարել է հետազոտելի օբյեկտի հետազոտություն, իսկ հետազոտությունը կատարված չլինելու դեպքում՝ վճարել Կատարողի կողմից փաստացի կատարված ծախսերը: Կասեցման ժամկետն ավարտվում է կասեցման համար հիմք հանդիսացող պարտավորությունը (պարտավորությունները) Պատվիրատուի կողմից ամբողջությամբ կատարելու օրը:

2.3.4. Պատվիրատուից պահանջել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան վճարելու պայմանագրի գինը,

2.3.5. հրաժարվել սույն պայմանագրի կատարումից և պահանջել վաղաժամկետ լուծել այն՝ Պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով,

2.3.6. անհրաժեշտության դեպքում մասակի վնասել, խարտել հետազոտելի օբյեկտը /-ները/,

2.3.7. Պատվիրատուից պահանջել պատշաճ կերպով կատարելու սույն պայմանագրով ստանձնած իր պարտականությունները:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պատվիրատուի կողմից ներկայացված նյութերի հիման վրա, սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցել Ծառայությունը՝ տվյալ ոլորտը կարգավորող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների ու մեթոդների համաձայն,

2.4.2. Ծառայության մատուցմանն ուղղված աշխատանքներն իրականացնել Պատվիրատուի նշած օբյեկտների գտնվելու վայրում, եթե դրանք Կատարողի մոտ տեղափոխելը դժվարին է կամ հնարավոր չէ,

2.4.3. Պատվիրատուի հարցումով տեղեկացնել նրան Ծառայության մատուցման ընթացքի մասին,

2.4.4. միայն Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) կատարմանը ներգրավել երրորդ անձի,

2.4.5. անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ սույն պայմանագրով սահմանված ժամկետում Ծառայության կատարումն ավարտին հասցնելուն խոչընդոտող՝ Կատարողից անկախ առաջացած հանգամանքների և դրանց հնարավոր տևողության մասին,

2.4.6. Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ներկայացվելու օրվանից սկսած 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված տեխնիկական թերությունները,

2.4.7. սույն պայմանագրի կապակցությամբ ձեռք բերված տեղեկությունները տրամադրել հետաքննության, նախաքննության մարմիններին, դատարանին կամ այլ մարմիններին՝ միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված գրավոր հարցման կամ պահանջի հիման վրա, ինչպես նաև խստիվ պահպանել սույն պայմանագրի կնքման և կատարման առնչությամբ իրեն հայտնի դարձած՝ ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով պաշտպանվող տեղեկությունների գաղտնիությունը՝ ձեռնպահ մնալով դրանց տարածումից, հրապարակումից, երրորդ անձանց որևէ կերպ տրամադրումից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

2.4.8. պատշաճ կերպով կատարել սույն պայմանագրով ստանձնած իր պարտականությունները:

3. Փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) կատարման համար անհրաժեշտ օբյեկտներ տրամադրելու և ստանալու կարգը

3.1. Պատվիրատուն Կատարողին է ներկայացնում փորձաքննության կատարման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ ելակետային տվյալներ պարունակող օբյեկտներ (այսուհետ՝ օբյեկտներ), ինչպես նաև փորձագետին առաջադրված տեխնիկական առաջադրանքը (հարցերը):

3.2. Եթե օբյեկտը (օբյեկտները) Կատարողի մոտ տեղափոխելը դժվարին է կամ հնարավոր չէ, Պատվիրատուն ներկայացնում է միայն օբյեկտների ցանկը: Այդ դեպքում Պատվիրատուն օբյեկտը (օբյեկտները) ներկայացնում է դրա (դրանց) գտնվելու վայրում՝ փորձաքննությունը (հետազոտությունը, փորձարկումը, գնահատումը) կատարող փորձագետի (փորձագետների) պահանջով:

3.3. Սույն պայմանագրի թիվ 2 հավելվածով հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելուց հետո Կատարողը սույն պայմանագրի կատարման համար իրեն տրամադրված օբյեկտները եզրակացության հետ միասին հետ է վերադարձնում (հանձնում) Պատվիրատուին (բացառությամբ Պատվիրատուի կողմից հետազոտման համար ներկայացված նմուշները հետ չպահանջելու դեպքերի):

3.4. Եթե փորձաքննության մեթոդիկայի համաձայն հնարավոր է հետազոտվող օբյեկտի (օբյեկտների) բուն հատկանիշի (հատկանիշների) վնասում կամ ոչնչացում և (կամ) դրա նշանակության կորուստ, ապա փորձաքննությունը (հետազոտությունը, փորձարկումը, գնահատումը) կատարվում է տվյալ հանգամանքը Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո՝ վերջինիս գրավոր թույլտվությամբ: Օբյեկտի (օբյեկտների) վնասման, ոչնչացման կամ դրա նշանակության կորստի չափը նշվում է եզրակացության մեջ, որը չի կարող գերազանցել փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) մեթոդիկայով սահմանված չափը:

4. Պատվիրատուի առաջադրանքի և եզրակացության ընդունման կարգը

4.1. Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքը (առաջադրված հարցը) համարվում է Կատարողին տրամադրված՝ անհրաժեշտ օբյեկտները դիմումով ներկայացվող ցանկով Կատարողին տրամադրելու, իսկ օբյեկտները տեղափոխելու դժվարության կամ հնարավոր չլինելու դեպքում՝ դրանք համապատասխան վայրում փորձագետին (փորձագետներին) տրամադրելու պահից:

4.2. Կատարողը եզրակացությունը հանձնում է Պատվիրատուին պայմանագրի Կողմերի կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև հաշիվ-ապրանքագրի հիման վրա:

4.3. Ծառայության մատուցման ավարտի օր է համարվում փորձաքննության ավարտված լինելու և դրա վերաբերյալ Պատվիրատուին մասին իրազեկելու օրը:

4.4. Պատվիրատուն կամ նրա ներկայացուցիչը ստանում է եզրակացությունը ստանում է Կատարողից՝ համապատասխան գրանցամատյանում ստորագրությամբ հաստատելով դրանք ստանալու հանգամանքը:

4.5. Ծառայությունը համարվում է պատշաճ մատուցված, եթե պատվիրատուն ամբողջ ծավալով ընդունում է ծառայությունը և ստորագրում է հանձնման-ընդունման արձանագրությունը:

5. Ծառայության գինը և վճարման կարգը

5.1. Ծառայության գինը կազմում է 117000 (հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն՝ 19500 (տասնինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Պատվիրատուն Ծառայության գինը վճարում է անկանխիկ, Կատարողի՝ սույն պայմանագրում նշված գանձապետական դրամային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

5.2. Ծառայության գինը որոշվում է այն սկսելուց առաջ Կատարողի կողմից ներկայացված օբյեկտի տեսականու և ծավալների որոշման և հաշվարկի հիման վրա՝ Կատարողի մոտ գործող սակագների (որոնց մասին Պատվիրատուն տեղեկացվում է նախապես) համաձայն՝ ըստ սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայության գնի:

5.3. Կողմերի համաձայնությամբ, սույն պայմանագրի ստորագրման օրը, Պատվիրատուն կարող է վճարել կանխավճար՝ Ծառայության գնի ոչ պակաս, քան 50 (հիսուն) տոկոսի չափով: Պատվիրատուն Ծառայության գնի չվճարված մասը պարտավորվում է վճարել ոչ ուշ, քան Կողմերի կողմից սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 2 հավելվածի համաձայն կազմված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու օրը:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա երկկողմանի ստորագրման օրվանից և գործում է մինչև «31» դեկտեմբերի 2022թ.-ը:

6.2. Եթե Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է սույն պայմանագրի 2.2.3 կետում նշված միջնորդությունը, ապա պայմանագրի գործողությունը, միջնորդությունը Պատվիրատուին հանձնելու օրվանից սկսած, համարվում է կասեցված: Կասեցման ժամկետն ավարտվում է միջնորդության մեջ նշված պահանջը (պահանջները) Պատվիրատուի կողմից ամբողջությամբ կատարելու օրը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը («ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ»)

7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, նյութերի, այլ միջոցների ձեռք բերման անհնարինությունը և այլն, որոնք անհնարին են դարձնում Կողմերի՝ սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումը:

7.2. Այն Կողմը, որի համար ստեղծվել են անհաղթահարելի հանգամանքները, այդ մասին պետք է անհապաղ տեղեկացնի մյուս Կողմին:

7.3. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով: Սույն պայմանագրի հավելվածները, փոփոխությունները և լրացումները դրա անբաժանելի մասն են:

8.2. Կողմերը սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8.3. Կողմերը պարտավորվում են սույն պայմանագրի պայմաններից բխող, ինչպես նաև Կողմերի պարտականությունների կատարման կապակցությամբ ծագած վիճելի հարցերը լուծել բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ դատական կարգով:

8.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

9. Կողմերի հասցեները, միմյանց հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ տվյալները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ոստիկանություն ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 010596486 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն, ՀՀ 900011021947 ՀՎՀՀ 01533334	«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ ՀՀ, ք. Երևան, Իսակովի 24 հեռ.՝ (374-10) 77-77-10 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն, Երևանի թիվ 1 ՏԳԲ ՀՀ՝ 900018005588 ՀՎՀՀ՝ 01836525
ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետ Ա.Ներսիսյան	Տնօրեն՝ Ա.Հովսեփյան
_____	_____

Հավելված թիվ 1
Ծառայությունների մատուցման մասին 20.12.2022թ.
կնքված թիվ 22-0220Պ պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԳԻՆԸ

N	Կատարվելիք փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) տեսակը (ենթատեսակը),կոդը	Փորձաքննության (հետազոտության, փորձարկման, գնահատման) տեսակի (ենթատեսակի) օբյեկտները	Չափման միավորը (հատ, ժամ և այլն)	Միավորի քանակը	միավորի գինը՝ առանց ԱԱՀ-ի	Ծանա-յության գինը (ՀՀ դրամ)
1.	2.	3.	4.	5.	6.	7.
3.	06-հետքաբանական փորձաքննություն (06-02)	Թվով «1» հատ անվադող	հատ	1	37500	45000
4.	14-ավտոտեխնիկական փորձաքննություն (14-02)		հատ	1	60000	72000
5.	Ընդամենը՝ առանց ԱԱՀ-ի					97500
	ԱԱՀ՝ 20%					19500
	Ընդամենը					117000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ոստիկանություն
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 130
հեռ. 010596486
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
ՀՀ 900011021947
ՀՎՀՀ 01533334

ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետ Ա.Ներսիսյան

_____

ԿԱՏԱՐՈՂ

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Իսակովի 24
հեռ.՝ (374-10) 77-77-10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն, Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՀ ՝ 900018005588
ՀՎՀՀ՝ 01836525

Տնօրեն՝ Ա.Հովսեփյան